

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ա. Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Դարձվածքների էությունը լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է դրանք քննել իրենց պատմական զարգացման մեջ, այսինքն՝ պարզել, թե դարձվածքները ինչ ձևով են առաջանում լեզվում, ուսումնասիրել դրանց կազմավորման օրինաչափությունները¹:

Լեզվաբան Բ. Լարինը առաջարկում է տարբերակել բառակապակցությունների երեք տիպ, որոնք ներկայացնում են դարձվածքների զարգացման հաջորդական փուլերը, դասակարգման հիմքում դնելով դարձվածային հատկանիշների («իդիոմայություն») աստիճանական կուտակման միջոցով սովորական ազատ բառակապակցությունների վերածումը անբաժանելի կապակցությունների: Դրանք են՝ 1) ազատ բառակապակցություններ, որոնք «կազմվել լրիվ, քերականական կառուցվածքով բնական և նշանակությամբ ուղիղ կապակցություններ են»²: 2) Փոխաբերական բառակապակցություններ, որոնք բնորոշվում են ավանդականությամբ, այլաբերական օգտագործմամբ, վերաիմաստավորման առկայությամբ: 3) Իդիոմները կրճատված, նախնական բառային և քերականական կազմը նկատելիորեն ձևափոխած բառակապակցություններ են, որոնց իմաստային երկպալանայնությունը թուլացած է: Իդիոմը բառակապակցության զարգացման վերջին փուլն է, քանի որ այնուհետև այն կարող է բառապաշարից դուրս մնալ: Այս եռաստիճան դասակարգումը արտացոլում է բառակապակցության պատմության հիմնական փուլերը:

Սկզբում առկա է իրույթի (ռեալիա) անվանումը որպես իրականության որևէ հատվածի ընկալման ուղղակի արտահայտում: Այնուհետև ուղիղ իմաստով բառակապակցությունը իմաստաբանորեն նորացվում է փոխաբերական օգտագործման միջոցով, անցում է կատարվում «կոնկրետ իմաստից վերացականին, մասնավոր դեպքից ընդհանուրին»³: Փոխաբերականացումը բերում է բառակապակցության տարրերի առավել միաձուլություն և որոշակի պարզեցում՝ նախնական բառակապակցության որոշ տարրեր դուրս են մնում, փոխվում է քերականական կառուցվածքը: Դրա հետևանքով կապակցությունը հանդես է գալիս իբրև «պայմանական խորհրդանշան, որի պատկերավորությունը, իմաստային երկպալանայնությունը մթաճնած են»³:

Քանի որ դարձվածքը մեծ մասամբ երկպալանային է, այսինքն՝ լեզվում ընկալվում է երկակիորեն միաժամանակ. և՛ իր ամբողջական իմաստի, և՛ բաղադրիչների ուղիղ իմաստների տեսանկյունից, ապա, պետք է ենթադրել, որ դարձվածքի ներքին ձևը՝ այն ազատ բառակապակցությունը, որը գտնվում է դարձվածքի հիմքում, ոչ միայն դարձվածքի պատմությունն է ամփոփում իր մեջ, այլ որոշակի կարևորություն է ներկայացնում համաժամանակային կտրվածքում, քանի որ այդ ներքին ձևի և դարձվածքի ամբողջական իմաստի

* Հայերեն դարձվածքների դասակարգումը, դրանց առաջացման և կազմավորման ուղիները քննել ենք, հաշվի առնելով ժամանակակից դարձվածքաբանության ձեռքբերումները: Ըստ անհրաժեշտության համեմատություններ ենք արել անգլերենի, ռուսերենի և այլ լեզուների հետ:

1 Б. А. Ларин, Очерки по фразеологии (Ученые записки Ленинградского государственного университета, т. 198, вып. 24, Л., 1956, с. 218).

2 Նույն տեղում, էջ 219:

3 Նույն տեղում:

փոխազդեցության հետևանքով են ձևավորվում դարձվածքի պատկերավորությունը, հուզարտահայտչականությունը:

Դարձվածային միավորների ծագման ուսումնասիրության համար անհրաժեշտ է պարզել այն բառերի կազմը և հիմնական իմաստաբանական բնութագրերը, որոնցից կազմված են դարձվածքները: Դարձվածքների բաղադրիչները կարող են լինել՝ ա) ուղիղ կամ փոխաբերական իմաստով կիրառված ինքնուրույնաբար հանդես եկող բառեր, բ) հնացած իմաստներով բառեր, գ) բառեր, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում և տվյալ տարբերակում ինքնուրույն կիրառությունից զուրկ են և հանդես են գալիս միայն տվյալ դարձվածքների կազմում: Լեզվի դարձվածքային կազմի հիմքն են ստեղծում առաջին խմբի բառերը: Դրանց մեջ կարելի է առանձնացնել այն հիմնական բառիմաստային խմբերը, որոնք առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում դարձվածակազմության մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածքների կազմում հատկապես հաճախ են հայտնվում հետևյալ բառաիմաստային խմբերի միավորները. ա) գոյականներ՝ մարդկանց և կենդանիների մարմնի մասերի անվանումները (սոմատիկ դարձվածքներ) և կենդանիների անվանումները (կենդանական դարձվածքներ), բ) ածականներ՝ գունանիշ ածականները և շափային հատկանիշ ցույց տվող ածականները, գ) բայեր՝ շարժում և խոսքի գործընթաց ցույց տվող բայերի բառիմաստային խմբերը⁴:

Դարձվածքի ծագման աղբյուրը նկատի ունենալով լեհ լեզվաբան Ս. Սկոուպկան դարձվածքները բաժանում է երկու խմբի՝ բնական և պայմանական⁵: Բնական են համարվում այն դարձվածային միավորները, որոնք զանազան լեզուներում ինքնուրույնաբար են առաջանում և որոնց պատկերները արտացոլում են բնության երևույթները, կենդանական և բուսական աշխարհը, մարդու հոգեկան և ֆիզիկական վիճակները և այլն: Պայմանական դարձվածքները պայմանավորված են տվյալ ժողովրդի զարգացման առանձնահատկություններով, արտացոլում են ազգային մշակույթի փաստերը:

Բնական դարձվածքները հետագա ստորաբաժանման ենթարկելով, կարելի է առանձնացնել դարձվածքների հետևյալ խմբերը. 1. Դարձվածքներ, որոնք կապված են մարդու հետ: Սրանց մեջ կարելի է տարբերակել. ա) դարձվածքներ, որոնք պարունակում են անձնանուններ: Օրինակ՝ տատկի հեքիաթ, մի մարդու պես, մայրը մանուկը մոռանալ, մարդ դառնալ, բ) դարձվածքներ, որոնք պարունակում են մարդու մարմնի մասերի անվանումներ. աչքերը ոլորել, աչքը աչքին առնել, աչքը դեռ չթարթած, ատամի տակ ընկնել, ատամ կոտրել, ատամները սրել, լեզվին տալ, լեզվին չդիմանալ, ծնկները դողալ և այլն, գ) դարձվածքներ, որոնք ընդգրկում են մարդու մտավոր և հոգևոր կյանքի հետ կապված վերացական հասկացություններ. հոգին բռան մեջ լինել, հոգին դուրս գալ, հոգին թեթևացնել, հոգու խորքում, մտքի մեջ ընկնել, մտքին դնել, մտքից անցնել, մտքում պահել, մտքերով տարվել, խելքը գնալ, խելքը կորցնել, խելքը հասնել, խիղճը տանջել, խիղճը շարժել, խիղճը մաքուր:

2. Դարձվածքներ, որոնք առնչվում են բնությանը: Սրանք կարող են լինել. ա) անկենդան բնությանը վերաբերող դարձվածքներ: Սրանց ծագման աղբյուր կարող են լինել այն պատկերները, որոնք կապված են ջրի, կրակի, անօրգանական նյութերի, հանածոների, բնական տարերքների, տիեզերքի և իր մասերի հետ: Օրինակ՝ ամպերում սավառնել, աստղերը հաշվել, արևը մայր մտնել, արձճի ծանրությունը, գլխին կարկուտ բերել, լուսնից ընկած, ծովը գցել, կրակը հանգչել, հող պատրաստել, ձյունի նման հալել, ջուրը

⁴ Г. Г. Соколова, Фразеобразование во французском языке, М., 1987, Л. П. Смит, Фразеология английского языка, М., 1959.

⁵ С. Скорупка, Фразеологические идиоматизмы в польском языке и их происхождение («Славянская филология», 1958, № 3, с. 125—147).

նետել և այլն: բ) Կենդանի բնության հետ կապված դարձվածքներ: Դրանցում զանազանվում են նախ՝ դարձվածքներ, որոնց պատկերները վերցված են բուսական աշխարհից, օրինակ՝ արմատ գցել, արմատների մեջ թափանցել, ծառի պես, փշերի վրա լինել, փուշ ու տատասկ և այլն, ապա՝ դարձվածքներ, որոնց պատկերները վերցված են կենդանական աշխարհից. օրինակ՝ հավի խելք, հավի սիրտ, աղոթած էշ, շան կյանք, օձի ճուտ, կատարը տաք, կտուց-կտցի տալ, պուշը իրեն քաշել, ուրիշի բնում ձու ածել, փետուրները քամուն տալ, պուշը ցից փախել, պուշը կախ և այլն:

Վերը բերված դարձվածքներից մարմնի մասերի անվանումներով և բնությանը առնչվող դարձվածքները մեծ թիվ են կազմում ինչպես հայերենի, այնպես էլ ռուսերենի և անգլերենի դարձվածային ֆոնդում: Ռուսերենում, օրինակ, մարմնի մասերի անվանումներով դարձվածքների տեսակարար կշիռը 22,8 տոկոս է, իսկ կենդանական անվանումներով դարձվածքներինը՝ 5 տոկոս: Հետաքրքիր է նշել, որ բնական դարձվածքները հաճախ իրենց զուգահեռները ունենում են մի քանի լեզուներում: Ինչպես, օրինակ, հայ. շուն ու կատու լինել, ռուս. жить как кошка с собакой, ֆր. vivre comme chien et chat, գերմ. wie Hund und Katz leben, իսպ. como perros y gatos, հայ. եզան պես աշխատել, ռուս. работать как вол, գերմ. arbeiten wie ein Stier, իսպ. trabajar como un buey, հայ. սիրտ ունենալ, անգլ. have the heart, ֆր. avoir le coeur և այլն: Ուսումնասիրողներն այն կարծիքի են, որ բնական դարձվածքների միջլեզվական հարաբերակցության պատճառը տիպաբանական է, այսինքն՝ դրանք անկախաբար առաջանում են մի շարք լեզուներում իրականության համաձայն պայմանների ազդեցությամբ:

Պայմանական դարձվածքները ևս երբեմն ունենում են իրենց զուգահեռներն այլ լեզուներում: Բայց դա ավելի հաճախ բացատրվում է ընդհանուր աղբյուրից դարձվածքների փոխառությամբ: Պայմանական դարձվածքները բաժանվում են մի քանի տիպի.

1. Դարձվածքներ, որոնք առնչվում են ազգային իրույթներին: Սրանք կարելի է ստորաբաժանել հետևյալ խմբերի. ա) պատմական փաստերի, դեմքերի, դեպքերի հետ կապված դարձվածքներ, որոնց թիվը հայերենում այնքան էլ շատ չէ. Արա գեղեցիկ, խայտառակության սյունին գամել, խաչակրաց արշավանք, կուլակի դուդուկ, ձայնազուրկ անել, սև ուրբաթի պես, Սիբիր քշել, փարավոնի գերություն և այլն: Բերված դարձվածքների մի մասը արտացոլում է այլ ժողովուրդների պատմության փաստեր: Հետևյալ անգլերեն դարձվածքները a Dutch bargain (միակողմանիորեն շահավետ գործարք), a Dutch concert («կատվի համերգ»), a Dutch defence (կեղծ պաշտպանություն), a Dutch feast, (խնջույք, որի ժամանակ տանտերն առաջինն է հարբ. մ), I am a Dutchman if... (անիծվեմ եթե...), Dutch courage (հարբածի քաջություն), որոնցում Dutch (հոլանդական) բառը օգտագործված է բացասական իմաստով, հիշեցնում են XVII դ. անգլիացիների և հոլանդացիների միջև ծովային մրցակցությունն ու պատերազմները: բ) Ժողովրդական հավատալիքների և ավանդույթների հետ կապված դարձվածքներ: Հայերենում շատ են ճակատագրին և գուշակությանն առնչվող դարձվածքները. բախտը բանել, բախտը բացվել, բախտը կապել, բախտը ժպտալ, բախտը խաղալ, բախտի անիվը դառնալ, բախտի անիվը թեքվել (ծովել), գիր անել, գիր բացող, գիրկապ անել, գործը ձախ գնալ, ձախ ոտքի վրա վեր կենալ, քաջքի ձայն, ծաղիկ չափել, ճակատին սև գիր գրել, շար աչք, շար աչք դիպչել, շարի գալ, շարի շորշոփ և այլն: Կան դարձվածքներ, որոնք արտացոլում են աստղագուշակության վերաբերյալ հավատալիքները. աստղը բաց, աստղը բռնել, աստղը գունատվել, աստղը ընկնել, աստղը խավարել, աստղը շողշողալ, աստղը վառ և այլն: գ) Բարքերի, սովորույթների, ծեսերի հետ կապված դարձվածքներ. փեշը համբուրել, ոտը համբուրել, աղ ու հաց ուտել, աղ ու հաց կտրել:

երեսին մուր քսել, ձեռները հինա դնել, շապկի միջով անց կացնել, շապկի փեշը գլխին քաշել: Քիչ չեն ամուսնության ծեսին առնչվող դարձվածքները: Թագ ու պսակ, խաչը գլխին բռնել, կանաչ-կարմիր կապել, կանաչ պսակը հյուսել, հալավը օրհնել: Մի շարք դարձվածքներ էլ արտացոլում են սգի ծեսը. սև կապել, սև հագնել, սև կապավոր, սև լաշակավոր, մազերին հող ու մոխիր ցանել, հողը գլխին տալ, գերեզմանին պաղ ջուր ածել և այլն:

2. Դարձվածքներ, որոնք ծագում են ժողովրդական բանահյուսությունից և գեղարվեստական գրականությունից: Բանահյուսությունից ծագող դարձվածքներ են. անմահական աղբյուր, լույս աշխարհ, ձևում հեծնող պառավ, հեքիաթային արագություն և այլն: Որոշ դարձվածքներ գրական լեզու են. թափանցել հայ գրողների ստեղծագործություններից. ազգային ջոջեր, մեղ-մացուցիչ դեպք հանցանաց (Հ. Պարոնյան), Քաշ նազար, Ձախորդ Փանոս, Կիկոսի մահը դառնալ (Հովհ. Թումանյան), Գասպարյանի շարագրություն (Սիմակ), տեր Թողիկի դպրոց (Ռաֆֆի):

3. Դարձվածքներ, որոնք կապված են մարդկային գործունեության զանազան բնագավառների հետ.

ա) գյուղատնտեսական աշխատանքին առնչվող. խոփը քարին առնել, խոպանը հերկել, լուծին մոտ չդալ, գերանդի քաշել, լուծը գետինը մնալ, խամից դուրս բերել, խամով ընկնել, խոփը սուր, խոփի տակ քար լինել, կալի վրա հասնել, հունձք անել, անգլ. to live in clover (առանց հոգսի ապրել), to break fresh ground (խոպան հերկել, նոր գործ սկսել), to make hay off (հարմար ընկնել օգտագործել), to plough the sands (անօգուտ գործով զբաղվել), a lonely furrow (միայնակ մարդու դժվար կյանքը) և այլն:

բ) Զանազան հին արհեստների հետ կապված դարձվածքներ. աքցանի մեջ առնել, աքցանով դուրս քաշել, բուրդը գզել, բուրդը բամբակ գզել, իր արշինով չափել, իր թելը մանել, կաղապարի մեջ դնել, կաշին դաբախանում՝ ճանաչել, կացին սրել, կլայեկած կոկորդ, մանածի խառնած կաժ, նույն սանդը ծեծել, թել ու դերձան դառնալ, համ նալին խփել, համ մեխին, անգլ. to see through a millstone (շատ խորաթափանց լինել), to strike white the iron is hot (երկաթը տաք-տաք ծեծել), between hammer and anvil (ծանր դրություն մեջ), to be on the anvil (քննարկման ընթացքում լինել), to be in a white heat (ցասման մեջ ընկնել) և այլն:

գ) Մովային գործի և ձկնորսության հետ կապված դարձվածքներ: Սրանց թիվն աննշան է հայերենում, իսկ անգլերենում, ընդհակառակը ծովային ծագման դարձվածքները մեծ թիվ են կազմում: Սա բացատրվում է արտալեզվական գործունեությամբ: Մովային ծագում ունեն հետևյալ դարձվածքները. խարիսխ նետել, խարիսխը վերցնել, ցանցն ընկնել, ռուս. выбрасывать за борт (մի կողմ նետել), сесть на мель (նեղն ընկնել), сматывать удочки (շտապ հեռանալ), անգլ. to turn adrift (բախտի քմահաճուքին նետել), to drop the pilot (բարի խորհրդատուի օգնությունից հրաժարվել), to lay an anchor to windward (ժամանակին նախապատրաստվել, միջոցներ ձեռք առնել), to take in a reef (ժախսերը պակասեցնել), to pump ship (անօգուտ կերպով փորձել փրկել անհայտ գործը), in full sail (ամբողջ արագությամբ), straight off the reel (առանց կանգ առնելու) և այլն:

դ) Խաղերի և զվարճալիքների հետ կապված դարձվածքներ. կոճին ալջու կանգնել, ճանը ճկվել, վեգ սորել, պահմաոցի խաղալ, ռուս. жив курилка (գետ կենդանի է), играть в бирюльки (դատարկ բաներով զբաղվել) և այլն: Քիչ չեն թղթախաղին վերաբերող, դարձվածքները. խաղաթղթերը բանալ, խաղաթղթերը խառնել, խաղաթղթի վրա դնել, ռուս. последняя карта (վերջին քալ), скрывать свои карты (մտքերը ծածկել), смешать все карты (մեկի ծրագրերը խառնել), ставить на карту (բախտախաղի դնել), стоп

ять на карте на кону (մի մազի վրա լինել), անգլ. to have a cardupone's sleeve (գաղտնի մտադրություն ունենալ), to hold the trump card (դրություն տերը լինել), to play one's cards boldly (իրադրությունը ճիշտ չօգտագործել), to put one's cards on the table (պատմել ամեն ինչ՝ առանց որեէքան թաքցնելու), play into the hands of sb. (մեկի օգտին գործել), to turn up trumps (հաշող ձեռով դասավորվել) և այլն:

Ե) Արվեստներին առնչվող դարձվածքներ. առաջին շուրթակ նվազել, դեր խաղալ, դերի մեջ մտնել, կոմեդիա խաղալ, եզրափակիչ ակորդ, թատերաբեմ դուրս դալ, ներկերը (գույները) խտացնել, վառ գույներով պատկերել, անգլ. to sing another tune (հնազանդվել), to sing small (հնազանդվել), a blot on the landscape (իր մերձավորներին խայտառակող մարդ), to ring down the curtain (վարագույրն իջեցնել), to be before the footlights (գործի աչքի առջև լինել), a change of scene (իրադրության փոփոխություն) և այլն:

Զ) Գիտության զանազան բնագավառների հետ կապված դարձվածքներ. հավասարվել զրույի, ընդհանուր հայտարարի բերել, տորիչելյան դատարկություն, ծանրության կենտրոն և այլն: Հետևյալ դարձվածքներն առաջացել են լեզվաբանական տերմինների հիման վրա. կախման կետեր դնել, հարցականի տակ դնել, շեշտը դնել մի բանի վրա, փակագծերը բացել, փակագծի մեջ:

Է) Ռազմական գործի հետ կապված դարձվածքներ. թրերը խաշաձեկ, թուր բարձրացնել մեկի վրա, թուրը պատյանը դնել, թուր ու թվանք դառնալ իրար հետ, նահանջի փող փչել, նիզակ ճոճել, ռումբի նման պայթել, սվիններով դիմավորել, սրերը խաշել, սուրը մերկացնել, վառողը սպառվել, վառողի հոտ առնել, ռուս. держать порох сухим (վառողը չոր պահել), пахнет порохом (կովի հոտ գալ), тратить даром порох (անտեղի ջանք թափել), складывать оружие (զենքը վալր դնել), поднимать на щит (երկինք հանել), тяжелая артиллерия (ծանր հրետանի), անգլ. to lay down one's arms (զենքերը վալր դնել), to beat retreat (նահանջի փող հնչեցնել), to throw a bomb into (անհանգստություն պատճառել), the plan of campaign (գործողությունների պլան), a false alarm (կեղծ տագնապ), up in arms (կովի պատրաստ) և այլն:

Ը) Մարզական կյանքին առնչվող դարձվածքներ. խաղից դուրս գալ, Կրկորդ շնչառություն, հաշիվը բացել, մատ լինել, ռուս. быть в форме (կազմ ու պատրաստ), нажимать на все педали (ամեն ինչ անել), брать барьер (արգելքը հաղթահարել), անգլ. to draw the long bow (խիստ չափազանցնել), to go beyond the mark (շատ հեռուն գնալ), to hit the mark (նշանակետին խփել), to hit below the belt (անազնիվ կերպով գործել), to make a good move (լավ քայլ կատարել) և այլն:

Թ) Կրոնին և եկեղեցուն վերաբերող դարձվածքներ. աղոթք դառնալ, այն աշխարհը գնալ, գլխին ավետարան պահել, գլխին պատարագ կարդալ, ի տեր հանգչել, խաչ դնել, խաչը գլխին բռնել, խաչը պղծել, խաչը շուրը գցել, խունկ ծխել, խունկ ու մոմ վառել, ծոմ պահել, կարմիր հավկիթ, հանդերձյալ կյանք, մատաղ չկտրել մեկի հետ, մեղքը առնել, սրբի դուռ դառնալ և այլն:

Ժ) Կենցաղի հետ կապված դարձվածքներ. հացին յուղ քսել, խմորը շատ շուր կվերցնի, հացի մեջ աղ չլինել, գրպանի ծախս, դանակ սրել, եղ ու մեղր դառնալ, տան ճրագ, կարմիր գոգնոց, ձեթ դառնալ, շորերը վրայից թափվել և այլն:

Պատմանասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածքների առաջացման աղբյուրները հիմնականում նույնն են քննվող լեզուների համար: Սա-

կայն ըստ մեր դիտումների, առանձին լեզուներում որոշ ոլորտներից ծագող դարձվածքները ավելի հաճախակի են: Սա պայմանավորված է հիմնականում արտալեզվականորեն՝ ժողովրդի կյանքում գործունեության տվյալ բնագավառի դերով: Այսպես, հայերենում առավել հաճախակի են կրոնի և եկեղեցու, բարքերի և սովորությունների, ժողովրդական հավատալիքների և ավանդությունների վրա հիմնված դարձվածքները: Եվ ընդհանրապես, թվով ավելի քիչ են գեղարվեստական գրականությունից ծագող, պատմական փաստերի, ժողային գործի և ձկնորսության հետ կապված դարձվածքները: Բնությանը առնչվող դարձվածքները մոտավորապես նույն հաճախականությունն ունեն քննվող լեզուներում:

Հայտնի է, որ լեզվում դարձվածքները միանգամից չեն հայտնվում, այլ աստիճանական կազմավորման արդյունք են: «Ինչ ճանապարհով էլ որ դարձվածքներն առաջանան,— գրում է Ա. Կունինը,— նրանք անպատճառ պետք է անցնեն պոտենցիալ դարձվածականության փուլը: Դա դարձվածաբանության օրենքն է: Պոտենցիալ դարձվածքները, աստիճանաբար ընդարձակելով իրենց կիրառման ոլորտը, դառնում են դարձվածային միավորներ, ձեռք բերելով դարձվածային կայունության այն տարրերը, որոնք իրենց պակասում են, այսինքն, ինչպես և ցանկացած այլ գործընթացում, քանակը աստիճանաբար վեր է ածվում որակի»⁶:

Հաշվի առնելով այն լեզվական նյութը, որի հիման վրա առաջացել է դարձվածքը, կարելի է տարբերակել դարձվածակազմության հետևյալ հիմնական տիպերը. 1. դարձվածքների կազմում ազատ բառակապակցություններից, 2. պոտենցիալ դարձվածքների հիման վրա, 3. հեղինակային արտահայտություններից, 4. ժողովրդական բանահյուսությունից ծագող արտահայտությունների հիման վրա, 5. այլ դարձվածքների հիման վրա, 6. այլ լեզուների դարձվածքներից:

1. Դարձվածքի կազմումը ազատ բառակապակցությունից տեղի է ունենում երկու ձևով՝ ազատ բառակապակցությունների փոխաբերական վերափոխման միջոցով և ազատ բառակապակցությունների փոխանվանական վերափոխման միջոցով: Փոխաբերական վերափոխման միջոցով լեզվի դարձվածային ֆոնդի հարստացման կարևորագույն աղբյուրն է և հիմնված է երկու առարկաների, երևույթների և հասկացությունների միջև նմանության վրա: Փոխաբերական վերափոխման միջոցով կարող է լինել լրիվ կամ մասնակի: Լրիվ վերափոխման միջոցով են, օրինակ, հետևյալ դարձվածքները. խոտը բերանին, խնձոր գլորել, սոխի գլուխ, ցամաք ձորի աղվես, ասեղի ծայր և այլն: Մասնակի փոխաբերական վերափոխման հետևանքով են առաջացել հետևյալ դարձվածքները. հողի գին, ճրագով փնտրել, քունը փախչել և այլն: Փոխանվանական վերափոխման հիմքում ընկած են առարկաների միջև եղած կցորդական զուգորդությունները, այն է՝ պարունակողի օգտագործումը պարունակչի փոխարեն, գործողությունը՝ արդյունքի փոխարեն, հատկանիշը՝ առարկայի փոխարեն և այլն: Օրինակ՝ օձիքը աղատել, աչքը խաբել, հարկի տակ, ճակատի քրտինքով վաստակել, ծնկները ծնծել, աչքը արյուն կոխել, արյունոտ ձեռք և այլն:

2. Դարձվածքները կարող են կազմվել առանց աղաո բառակապակցությունների փուլն անցնելու: Այդ արտահայտությունների պատկերավորությունը ձևավորվում է նրանց կազմի մեջ մտնող բառերի վերափոխման հետևանքով: Դարձվածակազմության այս եղանակը կոչվում է «դարձվածքների առաջացում պոտենցիալ դարձվածքներից»⁷: Այսպիսի դարձվածքները կարող են հիմնված լինել փոխաբերության, փոխանունության, չափազանցության, համեմատության, շրջանության և մի շարք այլ ոճաբանական միջոց-

⁶ А. В. Кунин, Пути образования фразеологических единиц («Иностранные языки в школе», 1971, № 1, с. 10).

⁷ Նույն տեղում, էջ 11:

ների վրա. օրինակ, խելք հավաքել, անվանը ցելս կպցնել, խելքը հացի հետ ուտել, բերանին կողպեք դնել (փոխաբերության հիման վրա), ականջը ծանր, ականջները սրել, լեզու թափել, բերանը փոխվել (փոխանունություն), գլխին ձյուն գալ, երկաթե ավել, զինվորական համազգեստ հագնել (շրջասություն), սարերը շուռ տալ, ասեղ մաշկել, երկու խոսք, մազը գերան շինել, երկնքից աստղեր վայր բերել (չափազանցություն), պոմիդորի պես կարմիր, ինչպես որոտը պայծառ երկնքից, աչքի լույսի պես պահել (համեմատություն):

3. Հայտնի է, որ դարձվածքների մեծ մասը առաջանում է բնավոր խոսքում և հնարավոր չի լինում որոշել դրանց հեղինակներին: Սակայն լեզվում կան մի շարք դարձվածքներ, որոնք, հնարավոր է լինում որոշել, թե երբ և ինչ հանգամանքներում են առաջին անգամ օգտագործվել: Այս կարգի դարձվածքները իրենց գոյության սկզբնական շրջանում ընկալվում են որպես թեմավոր խոսքեր, բայց կիրառման ոլորտի ընդլայնման հետ մեկտեղ լեզվի կրողների համար արտահայտության հեղինակը մղվում է երկրորդ պլան, մոռացության է մատնվում: Հենց այդ շրջանում էլ թեմավոր խոսքը վեր է ծածկում դարձվածքի: Օրինակ՝ անբան Հուռի, բանը հասավ դիմանքաշուն, յուզն ու բրինձը, քեֆի Հասան (Հովհ. Թումանյան), մեծապատիվ մուրացկաններ (Հ. Պարոնյան), Աբու Հասանի մաշկներ (Ստ. Լիսիցյան) և այլն:

Անգլերենի դարձվածային ֆոնդի հարստացման մեջ մեծ է Շեքսպիրի ստեղծագործությունների դերը: Շեքսպիրիզմների թիվն անգլերենում 100-ից ավելի է: Շեքսպիրի ստեղծագործություններից են ծագել հետևյալ դարձվածքները *cakes and ale* («Ճասներկուերորդ գիշեր»), *a fool's paradise* («Ռոմեո և Զալիստա»), *the green-eyed monster* («Մակբեթ»), *the observed of all observers, to be or not to be, out of joint* («Համլետ»), *to paint the lily* («Ջոն արքայ»), *thereby hangs a tale* («Անսանձի սանձահարումը») և այլն:

4. Լեզվի դարձվածային ֆոնդը համարվում է ժողովրդական բանահյուսության զանազան ստեղծագործություններից՝ հեքիաթներից, առակներից, զրույցներից, առածներից եկած արտահայտություններով: Օրինակ՝ մեծանալ ոչ թե տարով, այլ օրով, արևին ասում է՝ դու մի դուրս գա, ես եմ դուրս գալու: օձն իր պորտով, հավքն իր թևով, յոթ սարի ետև, ղշի թևով և այլն: Սրանք ժողովրդական հեքիաթներում կիրառվող կայուն բանաձևեր են, որոնք վերաիմաստավորման միջոցով համարվում են դարձվածքների շարքը: Ժողովրդական զրույցներից են ծագել «էշի հարսանիք», «աղի գնալ», «ծովը տանել, ծարավ ետ բերել» դարձվածքները:

Դարձվածքները հաճախ առաջանում են առածներից՝ վերջիններիս կերպարան միջոցով: Այս երևույթը Ա. Պոտեբնյան կոչում է «մտքի խտացում»: Նրա տեսության համաձայն առակները, առածները և ասացվածքները (այդպես նա կոչում է այն միավորները, որոնք այսօր ընդունված է անվանել դարձվածքներ) «մտքի խտացման» հաջորդական աստիճաններ են. «Ասացվածքը առակի կամ առածի տարր է, որը մասամբ առաջացել է առածից և առակից, որպես նրանց մնացորդ, նրանց խտացում, մասամբ էլ իր զարգացման մեջ չի հասել նրանց»³: Առածից դարձվածքի առաջացումը կարող է ընթանալ հետևյալ ուղիներով. ա) դարձվածքը համապատասխանում է՝ առածի մի մասին, իսկ նրա իմաստը արտացոլում է առածի իմաստն ամբողջությամբ: Օրինակ՝ շուրը լցրել են սանդը, ծեծում են՝ շուր ծեծել, ուս. Как собака на сене лежит, и сама не ест, и другим не даёт—собака на сене (շունը խոտի դեզի վրա): բ) Դարձվածքը համընկնում է առածի մի մասի հետ, բայց մասամբ է արտահայտում նրա իմաստը կամ էլ միայն հարաբերակցվում է առածի իմաստի հետ: Օրինակ՝ ծովն ընկնողը փրփուրին

³ А. А. Потебня, Эстетика и поэтика М., 1976, с. 527.

էլ ձեռ կզցի—ձեռքը փրփուրներին գցել, ոռււ. Близок локоть, да не уку-
снись—→ЛОКТИ КУСАТЬ, անգլ. Every cloud has a silver lining—→a sil-
ver lining (լույսի չող)։

5. Դարձվածքների կազմության վերը նշված չորս ուղիները կոչվում են «առաջնային դարձվածայնացում», քանի որ այս դեպքում դարձվածքները կազմվում են ոչ դարձվածային միավորներից։ Սակայն լեզվում հնարավոր է նաև դարձվածքի առաջացում մի ուրիշ դարձվածքի հիման վրա։ Այս ուղին կոչվում է «երկրորդային դարձվածայնացում»։ Խոսքում օգտագործվելու ըն-
թացքում հաճախ դարձվածքները ենթարկվում են իմաստարանական կամ
բառային կազմի փոփոխությունների։ Երբեմն այդ փոփոխված դարձվածքը
լեզվում կայուն կիրառություն է ձեռք բերում և առաջանում է մի նոր դարձ-
վածք։ «Երկրորդային դարձվածայնացման» գործընթացը մի քանի ուղիներով
կարող է ընթանալ՝ ա) բառային փոփոխություններ, այսինքն, փոփոխու-
թյուններ դարձվածքի բառային կազմում, որոնց հետևանքով առաջանում է
նոր դարձվածք։ Դարձվածքի բառային կազմը կարող է փոփոխվել մի շարք
պատճառներով։ Դարձվածքի ներքին ձևը պարզ դարձնելու, դարձվածքը լեզ-
վի կրողների տվյալ սոցիալական կամ տարածքային խմբին հարմարեցնելու
համար և այլն։ Օրինակ՝ աստված ընդ քեզ—աստված քեզ հետ, աստված մի
արասցե—աստված չանի, գլխին պոպոք (կակալ) կոտրել—գլխին ընկույզ
կոտրել, աչքին թոզ փշել—աչքին փռի փշել, հակադարձ համեմատական—
խոստոր համեմատական, ոռււ. стоять у кормила—→стоять у руля (ղեկի
մոտ լինել), на всех парусах—→на всех парах—→на всю железку (ամբողջ
արագությամբ)։

Նոր դարձվածքներ կարող են առաջանալ նաև դարձվածքների բաղադ-
րչական միջոցով։ Օրինակ՝ աղի արտասուք+արտասուք թափել=աղի ար-
տասուք թափել, ուղիղ ճանապարհ+ճանապարհից շեղել=ուղիղ ճանապար-
հից շեղել, ոռււ. ждать у моря погоды+искать ветра в поле=ждать
ветра в поле։

Երբեմն նոր դարձվածքներ են առաջանում դարձվածքի կազմի որոշ բա-
ռերի զեղչման (էլիպսիս) հետևանքով։ Օրինակ՝ ականջը ձայնի պահել—ա-
կանջը ձայնի, գլխից դուրս տալ—դուրս տալ, ոռււ. глаза на мокром
месте вставлены—→глаза на мокром месте։

բ) Իմաստային վերափոխություն, երբ դարձվածքի կազմը մնում է
նույնը, սակ իմաստը փոփոխվում է։ Օրինակ՝ «երկրորդ շնչառություն» դարձ-
վածքը իբրև սպորտային տերմին և նույնը ավելի ընդհանուր՝ «վերակենդա-
նանալ» իմաստով։ Ռուսերեն «скатертью дорога» դարձվածքը «բարի ճա-
նապարհ» իմաստի փոխարեն ձեռք է բերել նոր իմաստ՝ «կորի՛ր», «красная
девица» դարձվածքը իմաստափոխության հետևանքով կիրառվում է նաև
տղամարդկանց նկատմամբ՝ «երկչոտ» իմաստով։

գ) Բառիմաստային վերափոխություն, երբ փոխվում է սկզբնական
դարձվածքի ինչպես բառային կազմը, այնպես էլ իմաստը։ Սա հիմնականում
տեղի է ունենում հակադարձ նմանակության միջոցով։ Օրինակ՝ չգրված օ-
րենք—գրված օրենք, կրակի գին—ջրի գին, ոսկե տառերով գրվել—սև տառե-
րով գրվել, ոռււ. руки коротки—→руки длинные, с легким сердцем—с тя-
желым сердцем։

6. Դարձվածքների փոխառություն, այսինքն, դարձվածքների կազմում
այլ լեզուների դարձվածքային նյութի հիման վրա։ Փոխառյալ դարձվածքները
չինում են երկու տիպի. ա) ամբողջապես փոխառյալ դարձվածքներ, որոնք
կիրառվում են այն տեսքով, ինչով գործածվում են այն լեզվում, որից ծա-
գում են՝ alma mater, terra incognita, de facto, de jure, tabula rasa
և այլ լատինական դարձվածքներ կիրառվում են շատ լեզուներում, այդ թը-
վում և հայերենում։ Այդպիսի դարձվածքները երբեմն էլ օգտագործվում են
տառադարձված ձևով. այժա մատեր, դե ֆակտո, բ) պատճենված. սա դարձ-
վածքների փոխառության ամենից տարածված միջոցն է։

Որպես փոխառված դարձվածքների աղբյուր առաջին հերթին պետք է նշել Աստվածաշունչը: Աստվածաշնչյան ծագման դարձվածքները կազմում են դարձվածային միջազգային ֆոնդի կարևոր մասը: Օրինակ՝ հայ. ավետյաց երկիր, ռուս. земля обетованная, անգլ. the promised land, ֆրանս. terre promise, հայ. իր խաչը կրել, ռուս. нести свой крест, անգլ. to bear one's cross, ֆրանս. porter sa croix, հայ մուրդալ որդի, ռուս. блудный сын, անգլ. the prodigal son, իտալ. un figlio prodigo և այլն:

Մի շարք դարձվածքներ տարածվել են անտիկ գրականությունից և դիցաբանությունից: Օրինակ՝ ավգյան ախոռ, բաքոսյան պարեր, նավերը այրել, ոսկե անձրև, Պենելոպեի աշխատանք, Ռուբիկոնն անցնել, գորդյան հանգույցը լուծել և այլն: Այս դարձվածքների ղուգահեռները կան շատ լեզուներում:

Ժամանակակից հայերենում դարձվածքները հաճախ պատճենվում են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով. ամուր կաղին, գիտության գրանիտը կրծել, գրասենյակի մուկ, Թեդանոթի միս, կյանքի ուղեգիր, կոտրած տաշտակ և այլն:

Այսպիսով, դարձվածակազմության տիպերը քննվող լեզուներում մոտավորապես նույն կենսականությունն ունեն. առավել հաճախ դարձվածքներ են կազմվում ազատ բառակապակցությունների և պոստնցիալ դարձվածքների հիման վրա: Այս օրինաչափությունը պայմանավորված է ներլեզվականորեն:

Հայերենում դարձվածքները առաջանում են նույն աղբյուրներից, ինչ քննության ենթակա մյուս լեզուներում, այն տարբերությամբ միայն, որ հայերենում առավել հաճախակի են կրոնի և եկեղեցու, բարքերի և սովորույթների, ժողովրդական հավատալիքների և ավանդույթների հետ կապված դարձվածքները: Հայերենում, ինչպես անգլերենում և ռուսերենում, առավել հաճախ դարձվածքները կազմվում են ազատ բառակապակցություններից և պոստնցիալ դարձվածքներից:

ПРОИСХОЖДЕНИЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ.

А. В. ГЕВОРКЯН

Резюме

Сравнительное изучение происхождения фразеологических единиц (ФЕ) на материале армянского, английского и русского языков дает возможность выявить некоторые закономерности фразеобразования.

Изучение ФЕ с точки зрения источника их происхождения, т. е. той сферы материальной, культурной или общественно-экономической жизни народа, из которой заимствован образ фразеологизма, показывает, что источники происхождения ФЕ в основном совпадают в исследуемых языках. Однако в некоторых языках ФЕ, возникших из одних сфер, больше, чем из других. Это обусловлено экстралингвистическими ролью данной отрасли в жизни народа-носителя языка. В армянском чаще встречаются ФЕ, связанные с церковью и религией, нравами и обычаями, с народными повериями и преданиями. Менее частотны ФЕ, возникшие из художественной литературы, а также связанные с морским делом и рыболовством. Фразеологизмы, связанные с природой, имеют приблизительно одинаковую частотность в изучаемых языках.